ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<16>> ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ N 168

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային Համակարգի Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով ***որոշում եմ***՝

Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2017թ. բյուջեի նախահաշվում կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԱՀԱՌՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<19>> ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ. N 171

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 հոդվածի 1-րդ մասի 3-րդ կետի հաշվի առնելով անապահով քաղաքացիների դիմումները ***որոշում եմ***՝

Կոտայքի մարզի Գառնի համայնքի մի խումբ ուսանողներին, տրամադրել ուսման վարձ համաձայն հավելվածի :

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎՐԻ 2017Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի
Ն 171 ՈՐՈՇՄԱՆ

1.Ռիտա Հովհաննիսյան 30000 դրամ
2.Քրիստինե Բաղդասարյան 35000 դրամ
3.Մարիամ Մարտիրոսյան 50000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ N 170

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ՍԵՐՅՈԺԱ , ԱՐՏԱԿ , ՄԱՐԳԱՐԻՏ ԵՎ ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը,որ Սերյոժա,Արտակ,Մարգարիտ և Սուրեն Գրիգորյանների համասեփականության իրավունքով պատկանող, Կատայքի մարզի Գառնի համայնքի Հ.Թումանյան փողոց 1-ին փակուղի թիվ 6 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ՝***

1. Սերյոժա , Արտակ, Մարգարիտ և Սուրեն Գրիգորյանների համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 1990թվականին կառուցված բնակելի նշանակության շինությունները համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ որոշման առաջին կետով նշված ինքնակամ շինությունները կառուցվել են 2001թ-ի մայիսի 15-ից առաջ շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Մահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ N 169

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿՏԱՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով 22.02.2003թ. ուժի մեջ մտած <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի և 7-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված տնամերձ հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է համասեփականատերերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստնի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով ***որոշում եմ՝***

1. Սերյոժա, Արտակ, Մարգարիտ և Սուրեն Գրիգորյանների կողմից փաստացի օգտագործվող 0.305713 հա հողամասի սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎՐԻ 2017Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի
N 168 ՈՐՈՇՄԱՆ

1. 01.1.1. նախահաշվի 4111 հոդվածի 4-րդ եռամսյակից 600.0 հազ. դրամ տեղափոխել 06.3.1. նախահաշվի 4212 հոդվածի 4-րդ եռամսյակ:
2. 06.4.1. նախահաշվի 4212 հոդվածի 4-րդ եռամսյակից 200.0 հազ. դրամ տեղափոխել 06.3.1. նախահաշվի 4212 հոդվածի 4-րդ եռամսյակ:
3. 09.3.2. նախահաշվի 4727 հոդվածի 4-րդ եռամսյակից 185.0 հազ. դրամ տեղափոխել 06.3.1. նախահաշվի 4212 հոդվածի 4-րդ եռամսյակ: